ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Կանայք բիզնեսում

Իրականացման ժամանակահատված: 30.12.2015 - 29.12.2022

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 035 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EBRD

Նախագծի կայքէջ: ebrdwomeninbusiness.com/

Նախագծի նկարագրություն:

ԵՄ աջակցությամբ իրականացվող «Կանայք բիզնեսում» ծրագիրը կանանց ղեկավարած փոքր և միջին ձեռնարկություններին օգնում է հասանելիություն ստանալ իրենց աճի համար անհրաժեշտ ֆինանսների և գիտելիքների նկատմամբ: ՎԶԵԲ-ը՝ բիզնեսների ավելի մրցունակ դառնալուն ուղղված գործարար խորհրդատվությունից զատ, ապահովում է նաև ֆինանսների հասանելիություն՝ տեղական բանկերին տրամադրվող կանանց ղեկավարած ՓՄՁ–ների զարգացման համար նախատեսված վարկային գծերի միջոցով: Ծրագիրը նաև առաջարկում է ուսուցում, խորհրդատվություն և այլ աջակցություն, որը հնարավորություն կտա կին ձեռներեցներին կիսվել փորձառությամբ և սովորել միմյանցից:

Ակնկալվող արդյունքներ:

- Աջակցել կանանց ղեկավարած ՓՄՁ-ներին ֆինանսների հասանելիության հարցում՝ դրանց կայուն աճի և աշխատատեղերի ստեղծման համար.
- Մշակել կանանց ղեկավարած ՓՄՁ-ների համար հարմար կայուն ֆինանսական պրոդուկտներ.
- Աջակցել կանանց ղեկավարած ՓՄՁ-ներին խորհրդատվության և գիտելիքների ձեռքբերման հարցում.
- Տրամադրել հիմնական ձեռնարկատիրական հմտությունների ուսուցում.
- Տրամադրել մենթորության և կապերի ընդլայնման սեմինարներ: